



Խ Մ Բ Ա Գ Ր Ա Կ Ա Ն

ԿԱՀԻՐԵԻ ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ՊԱՏՄԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ



որին Ս. Օծուրյուն Վեհափառ Հայրապետի նախագահության տակ, 1956 թվականի մարտի 5—8-ին, Կահիրեում գումարվեց Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու բարձրաստիճան իշխանավորների՝ զերաշնորհ սրբազան եպիսկոպոսների ժողով, որին մասնակցում էին տասնյոթը բարձրաստիճան հոգևորականներ:

Եպիսկոպոսական այս ժողովը մեր այսօրվա եկեղեցական կյանքում շատ կարևոր և պատմական նշանակություն ունեցող իրադարձություն է:

Եպիսկոպոսական ժողովի կարևորությունն ու պատմական նշանակությունը կայանում է նրանում, որ

1) այդ ժողովին մասնակցում էր, Ամենայն Հայոց Հայրապետի նախագահությամբ, Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու ամբողջ եպիսկոպոսությունը՝ Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության, Ս. Երուսաղեմի և Կոստանդնուպոլսի Պատրիարքական Աթոռները և Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու իշխանությունը ներկայացնող տասնյոթը բարձրաստիճան հոգևորականներ:

2) Եպիսկոպոսական ժողովի օրակարգում դրված էին Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու հետագա կազմակերպման, գործունեության վերաբերյալ կարևոր և այժմեական հարցեր:

3) Օրակես գումար եկեղեցական ժողով Կահիրեի եպիսկոպոսական համագումարը նույնպես էր մեր ազգային-եկեղեցական կյանքում, 1917 թվականից հետո:

1956 թվականի հոկտեմբերի 7-ին Ս. էջմիածնում գումարված Ազգային-եկեղեցական սրբագումար ժողովը, իր 4-րդ և վերջին նիստում, միաձայնությամբ որոշեց «զեր տարին անգամ մը գումարել եպիսկոպոսական ժողով, զբաղելու համար կրոնա-եկեղեցական և բարեկարգչական ստիպողական հարցերով»:

Կահիրեում գումարված եպիսկոպոսական ժողովը նորին Ս. Օծուրյուն Վեհափառ Հայրապետի նախագահությամբ և Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու իշխանությունը ներկայացնող տասնյոթը բարձրաստիճան հոգևորականների մասնակցությամբ զբաղվեց Հայաստանյայց Առաքելական Եկեղեցուն վերաբերող կրոնա-եկեղեցական և բարենորոգչական կարևոր հարցերով:

Կահիրեի եպիսկոպոսական ժողովի օրակարգում կային հետևյալ տասը հարցերը.

1. Ընդհանուր զեկուցում Մայր Աթոռի ներկա կացության մասին.

2. Հայաստանյայց Եկեղեցու Սահմանադրության հարց.

3. Հայաստանյայց Եկեղեցու Կանոնադրի կազմության հարց.

4. Ս. Գրքի տպագրության 300-ամյակի առնակատարությունը և այդ առնչությամբ Ստվածաշնչի աշխարհաբար բարգմանության հարց.

5. Ս. էջմիածնի Հոգևոր ձեռնարանի առավել կազմակերպության խնդիր.

6. Արտասահմանից մի քանի հոգևորականներ էջմիածին հրավիրելու խնդիր.

7. Մայր Աթոռի կողմից հոգևոր կանառ տնկած խաչերը:

8. Ս. Էջմիածնի և մեր մյուս Աթոռների փոխհարաբերության ծրագիր լայնորեն տարածվելու հարց:

9. Հայաստանյայց եկեղեցու բարեկարգություն:

10. Քրիստոնեական այլ եկեղեցիների հետ հարաբերության խնդիր:

Նախկին պատանեական ժողովը ձեռնհասորեն հենարկեց օրակարգի բոլոր կետերը և միաձայն ընդունեց համապատասխան որոշումներ, առաջնորդվելով Հայաստանյայց Առաքելական եկեղեցու միասնության գաղափարից և մեր հավատացյալ ժողովրդի գերագույն շահերից:

Եկեղեցին աստվածահաստատ, հոգևոր ու բարոյական մի կազմակերպություն է, որի նիւնդներն ու գլուխն է մեր Փրկիչը, որը նիւնդեց եկեղեցին և այն հանձնեց Իր անմիջական առաքյալներին և աշակերտներին իր եկեղեցու հովիվների և առաջնորդների, նշարարության, ուղղափառության նախապահով առաջնորդելու Իր հավատացյալներին:

Եկեղեցու առաքելական ղեկավարության ժամանակամիջոցում, եկեղեցին, որպես «Քրիստոսի հավատացեալ մարդկանց ժողով» (գրի ոչ է եթ զխորան կոչէ եկեղեցի... այլ գնատացեալ ժողովուրդն) — Ս. Լուսավորիչ և Ս. Սահակ, «Մոռում վաճառեց»), և որպես աստվածահաստատ հոգևոր կազմակերպություն իր դավանանքով, իր ծիսական բարեպաշտական կյանքով, իր վարչատնտեսական կազմակերպությամբ վստահեց եպիսկոպոսներին, որոնք Ս. Հոգու առաջնորդությամբ ղեկավարում էին եկեղեցին:

Գործք Առաքելոցի պատմությունից հայտնի է, որ եկեղեցական խնդիրները ժողովներում կարգադրելու կարգը հաստատեցին առաքյալներ (Գործք, ԺԱ): Սուրբ Հարհ՝ հետևելով առաքյալներին և առաքելական ավանդության, որոշում են տարին գեր երկու անգամ եպիսկոպոսական ժողով գումարել: Քրիստոնեական համայնքի տեսանկյունից երկայնացուցիչ եպիսկոպոս է: Եպիսկոպոսները հավաքվում էին, ժողով գումարում և զբաղվում գաղական և մոնոտեսական վերհիմքի և այլ գոտ եկեղեցական հարցերի հետևողությամբ: Հերձվածողների դեմ Ուղղափառ եկեղեցու մղած պայքարում հիմնական ծանրությունը ընկնում էր եպիսկոպոսների վրա: Եպիսկոպոսն էր, որ զխափում էր պայքար: Եպիսկոպոսական ժողովն էր, որ հանդիսանում էր ուղղափառության ամրոցը: Եպիսկոպոսները գրում

էին հովվական և կանոնական նամակներ, և զրանցով փաստորեն հանդիսանում էին եկեղեցու ուղղափառության շատագովներն ու ղեկավարները:

Ժողով գումարելու, վերաբեր կայացնելու, եկեղեցական կանոններում սահմանադրություն հորինելու նախաձեռնությունը եպիսկոպոսների իրավունքն էր: Տիեզերական ու տեղական ժողովներում էլ վնասական ճայնը պատկանում էր եպիսկոպոսներին: Ժողովական արձանագրություններից երևում է, որ հիշվում են ավելի շատ եպիսկոպոսների անուններ: Նիկիայի առաջին տիեզերական ժողովում (325 թ.) կային 318 հայրապետներ, Կոստանդնուպոլսի երկրորդ տիեզերական ժողովում (381 թ.)՝ 150 եպիսկոպոսներ:

Մեզ հասած «Կանոնք առաքելական»-ի 27-րդ կանոնում խոսվում է եպիսկոպոսական ժողովի մասին. «ԵրկուՅՍ Ի ՏԱՐԻՈՉ ԺՈՂՈՎ ԼԻՅԻ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՆՆԵՐ ԵՎ ԲԵՆԵԴԵԿՏԱՆ ԿԱՄԻԱՆԱ զԻՐԱԴԱՆ ԲԱՐԵԿԱՅՈՒՄԵԱՆ, ԵՎ ԳԱՎԱՏԱՆԵԱՆ ԵԿԵՂԵՍԱԿԱՆ ԸՆԴՈՂԻՄԱՐԱՆՈՒՄԵԱՆ ԵՎԵՐԿԻՆ, ՄԻ ԱՆԳԱՄ Ի ԴՈՐՈՐԴ ԶԱՐԱՔՆ ՊԵՆԱՆԿՈՍԱԼԻՆ ԵՎ ԵՐԿՐՈՐԴ՝ ԵՎԵՐԿԱՆԱՅԻՆԱՆ»:

Եպիսկոպոսական ժողով գումարելու մասին խոսվում է նաև Նիկիական ժողովի 6-րդ կանոնի մեջ... «Քառի համարվեց սահմանել, որ ամեն աշխարհում տարին երկու անգամ ժողով լինի, որպեսզի բոլոր եպիսկոպոսները միատեղ ժողովվեն, բնեն այդպիսի քյուրիմացություններ: Ժողովներից առաջինը լինի Բաղամեծի տեղից առաջ... երկրորդը՝ աշնան ժամանակներում»:

Եպիսկոպոսական ժողովների միջոցով եկեղեցական, կրոնական, բարեկարգչական հարցերը բնական առաքելական սովորություններ եղել է նաև մեր մեջ, ի հնուց անտի մինչև այսօր:

Հենում, ըստ առաքելական կանոնի, մեզ մոտ ևս տարին երկու անգամ Հայրապետ շրջում էր ամբողջ երկիրը, եպիսկոպոսական ժողով գումարում, ամեն կողմ կարգ ու կանոն հաստատում: Ս. Լուսավորիչը, Մեծն Ներսեսը, Ս. Սահակը 12 եպիսկոպոսներով շրջում էին ողջ երկիրն Հայոց: Հատկապես եպիսկոպոսներ Նավասարդի տոնին Նահապիվան, իսկ Ս. Կարապետի տոնին Մուշ էին հավաքվում՝ զբաղվելու տարին գեր 1—2 անգամ եկեղեցական-բարեկարգչական հարցերով, և այնտեղ բնեկյան հետ կապով հարցեր՝ ներկայացնում էին կա՛մ Հայրապետին ի վավերացումն և կա՛մ ազգային ժողովին ի հավանություն:

Բայց վերջին ժամանակներս մեզ մոտ ընդունված կարգը այն է եղել, որ Ազգա-

յին-եկեղեցական սրբազումար ժողով գումարվել է միայն դեպքից դեպք, կարողիկոսական բնութագրության և օժման կապակցությամբ, և ժողովի իր բերացիկ օրակարգը վերացնելուց հետո ցրվել է, հաջորդ կարողիկոսական բնութագրության առթիվ միայն հավաքվելու համար:

Եկեղեցին չի կարող մատնվել անշարժության:

Եկեղեցին աստվածահիմն հաստատություն է, ապրող, շնչող, զարգացող, կատարելագործվող մի հոգևոր հաստատություն: ՆԱ ՊԵՏՔ է ԲԱՐՁՐԱՆԱ ԴԱՐԵՐԻ ՀԵՏ, ՏԱՐԱՄԱԿ ԵՎ ԸՆԴԱՐՁԱԿՎԻ ԺԱՄԱՆԱԿԻ ՈՒ ՄԻՋՈՅԻ ՄԵՋ. ԽՈՐԱՆԱ ԻՐ ՈՒՂՂԱՓԱՌՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԱՎԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ. ՄԻՇՏ ՆՈՐ ՈՒ ՃՇՄԱՐԻՏ ԽՈՍՔ ԲԵՐԻ ԻՐ ՀԱՍՏԱՆՈՒՄՆԵՐԻՆ, ԽՈՐՔՈՒՄ ՄՆԱՂՈՎԱՆՓՈՓՈՆ, ՆՈՒՅՆ ԵՎ ՀԱՎԻՏՅԱՆ:

Կրոնա-եկեղեցական, դավանաբանական, բարեկարգական հարցերում ղեկավարի, առաջնորդի, կազմակերպողի ունի միայն վերաառնված է եղել բարձր հոգևորականության: Ս. Կրիստոս Լուսավորիչն Եկեղեցին ղեկավարում էր մնալուն 12 խորհրդական եպիսկոպոսներով, որոնք առում և գործում էին Հայրապետանոցում և ծառայում էին որպես դռն եպիսկոպոսներ: Այս 12 եպիսկոպոսները Հայրապետի գործակիցներն ու խորհրդականներն էին Եկեղեցու բնութագրող և կազմակերպման և ղեկավարման գործում: Իսկ նշանավոր դեպքում միայն Ազգային-եկեղեցական ժողով էր գումարվում համագլխին նշանակություն ունեցող հարցեր բնեկելու համար:

Խոսելով այստեղ միայն վերջին ժամանակներում հրավիրված գուտ եկեղեցական ժողովների մասին, պետք է ասել, որ 1917 թվականին երջանկահիշատակ Ս. Գևորգ Ե կարողիկոսը իր ապրիլի 5-ի կոնդակով, Սիմոնի նախանշյալ գերաշնորհ Ս. Հուսիկ արքեպիսկոպոսի գլխավորությամբ հրամայում է կազմել եպիսկոպոսներից և վարդապետներից մի ժողով՝ չի պահպանություն առնողից և սեպականության ազգիս, ի շահ Ս. Եկեղեցու և հոտիս... առ ի բնեկ զառաքալս, որ առաջի մեզ դեռ չէր ժամանակ և կազմել ուրուագիծ ցանկայի փոփոխություն... զկնի խոհական խորհրդակցության ջերու առաջի առնել Մեզ գտեսություն և զկարծիս Յանձնախմբիդ առ ի տնօրինել զոր ինչ արժան ունիմք վարկանել ընդ փութ ի վերականգնումն նախկին կարգա և կանոնաց ըստ ոգու Ս. Եկեղեցու Մերոյ, է՛ որ ըստ առաջի արարելալ ուրուագիծ նախարդակի, է՛ որ ըստ առաջի լազոյն լայնատարր գումարման խորհրդակ-

ցական ժողովոյ, զոր ունիմք գումարել ի մօտոյ, մինչ ցգումարումն ազգային ընդհանուր ժողովոյ, յոր ձեռն ունի կազմակերպի վերջնական կանոնական Սահմանադրություն վարչության Ս. Եկեղեցու: Որով 1917 թվականի հունիսի 13-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում հրավիրվում է հոգևորական համագումար, զբաղվելու համար կրոնական-եկեղեցական բարեկարգական և այլ հարցերով:

Եկեղեցական համագումարը բացվում է Մատենադարանի (այժմյան ձեմարանի) շենքի առաջին հարկի 2 դահլիճներում և տևում է մինչև հունիսի 23-ը: Զուտ եկեղեցական այս համագումարին ներկա չեն կարողանում լինել արևմտահայ հոգևորականության ներկայացուցիչները՝ առաջին համաշխարհային պատերազմի պատճառով:

Եկեղեցական համագումարում Գևորգ Ե-ը ունենում է իր մշտական ներկայացուցիչը հանձին գերաշնորհ Ս. Հուսիկ արքեպիսկոպոսի, որը միշտ տեղյակ է պահում կարողիկոսին՝ համագումարի դիվանի հետ միասին, համագումարի նիստերի և զբաղումների մասին:

Եկեղեցական համագումարը ավարտելով իր աշխատանքները, ժողովի եզրակացությունները որոշման վերածած, օղորակված արձանագրություններով կարողիկոսին է ներկայացնում:

Կարողիկոսը իր գոհունակությունն է հայտնում եկեղեցական համագումարի բեղմնավոր աշխատանքների կապակցությամբ, իսկ համագումարի ժողովական որոշումների առթիվ ավելացնում է, որ դրանցից մի մասը հայրապետական վավերացման կարժանեան և կմտնեն կյանքի մեջ, իսկ «որոշումներից այնպիսիները, որոնք այժմին իսկ կյանքի մեջ մտցնելու հարմարություն չեն ունենա, կդրվեն իր կողմից, բնութայամբ իհարկե, ապագա Ազգային Սահմանադրական ժողովի առաջ, որպեսզի հանրական բնությունը իր կնիքը դնե նրանց վրա» («Առաքալ», 1917 թ., № 6—7, էջ 480):

Մեր սրբազան եպիսկոպոսներն են Հայաստանյայց եկեղեցու տեսուչներն ու հովիվները: Ինչպես անցյալում, նմանապես նաև այժմ, նրանք իրենց ձեռնում պետք է պահեն մեր եկեղեցու հոգևոր առաջնորդությունը: Ո՛վ ավելի ճիշտ ու լուսավոր ուղիներ կնշի մեր եկեղեցու հետագա հոգևոր զարգացման ու զորացման համար, էան մեր բարձրատիման հոգևորականությունը:

Տխուր է այստեղ արձանագրել, որ մեր եկեղեցին զանազան պատճառներով շատ

Լ ԱՇԽԱՐՀԱԿԱՆԱՑՈՒՄ, և այդ իսկ պատճառով տկարացել, որովհետև ըստ նորին Ս. Օժնուրյուն Վեհափառ Հայրապետի նիշտ բնութայն, «չէ կրցած պահել իր կայունությունը զանազան հովերու առջև, համախնդրակամ է աշխարհական խմբակցությանց ոտնձգությանց...»:

Նորընտիր Վեհափառ Հայրապետը, մեր եպիսկոպոսական ամբողջ դասի հետ միասիրտ ու միախորհուրդ, աշխատում է Հայաստանյայց եկեղեցին բարձրացնել իր հոգևոր կոչման և պատմական դերին, առանց վեհակույր մեր եկեղեցու ազգային նկարագրին, ժողովրդական կազմության:

Մենք իրավամբ հպարտանում ենք Հայաստանյայց Առաքելական և Սուրբ եկեղեցու ազգային նկարագրով և ժողովրդական կազմությամբ: Մեր եկեղեցուն միշտ էլ խոր է եղել կղերականությունը: Մեր ժողովներում եպիսկոպոսների հետ միասին նստած են եղել կողմ-կողմի, միաձայն ու համախորհուրդ, նաև հայոց իշխանները և կամ ժողովրդի ներկայացուցիչները: Հայաստանյայց Առաքելական եկեղեցու զերազույն օրենսդիր մարմինը Ազգային-Եկեղեցական սրբազումար ժողովն է: Այսպես է եղել, է և կլինի: Սակայն այդ չի նշանակում եկեղեցու հոգևոր իշխանությունը զրկել իր հեղինակավոր խոսքի ասելու իրավունքից և պարտականությունից:

Կանխելու գումարված եպիսկոպոսական ժողովը, որն ուրախությամբ ողջունվեց բովանդակ ազգի կողմից, զեղեցիկ գրավական է այն բանի, որ եպիսկոպոսական ժողովը կոչված է մեր օրերում ևս դառնալու Հայաստանյայց Առաքելական եկեղեցու կազմակերպման, գորացման գործում ազգեցիկ և հեղինակավոր գործունեներից մեկը:

Կանխելու գումարված եպիսկոպոսական համագումարը խոստովանելից ու խանդավառ հեռանկարներ բացեց Հայաստանյայց Առաքելական եկեղեցու միասնության, հոգևոր կազմակերպման և գորացման գործում:

Այս գաղափարների յույսի տակ, Կանխելու գումարված եպիսկոպոսական ժողովը Վեհափառ Հայրապետը իրավամբ որակեց «իսկզումար ժողով մը»:

Կանխելի եպիսկոպոսական ժողովը իր 3-րդ նիստում գրադվեց Հայաստանյայց Առաքելական եկեղեցու Սահմանադրության կազմության հարցով և այդ առիթով կազմված հատուկ հանձնախումբ, միաձայն որոշում քննարկեց, որ ՀԱՅԱՍՏԱՆԵՑԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՈՐԵՎԷ ԴԱՎԱՆԱԿԱՆ ԵՎ ՎԱՐԳԱՊԵՏԱԿԱՆ ԽՆԴԻԲ ՀԱՐԿ Է, ՈՐ ՆԿԱՏԻ ԱՌՆԵՎԻ ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ՄԵՋ ԵՎ ԱՆԿԻ ՆՏՔ ՄԻՈՅՆ ՆԵՐԿԱՅՈՅՎԻ ԱԶԳԱՅԻՆ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԺՈՂՈՎԻՆ ԵՎ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ Ի ՎԱԿԱՐԱՅՈՒՄՆ:

Այժմ Հայաստանյայց Առաքելական եկեղեցու Սահմանադրությամբ գրադվող հանձնաժողովը սկսել է իր աշխատանքները:

Նոր մշակվող այդ եկեղեցական Սահմանադրության մեջ, ըստ նորին Ս. Օժնուրյուն Վեհափառ Հայրապետի ցանկության և եպիսկոպոսական ժողովի միաձայն որոշման, աճեցավ նաև, որ «ՍԱՄԶՆԱԿՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՒՆԵՆԱ ՀԱՏՈՒԿ ԿԱՐԿԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ, ՈՐ ՀԱՏԱԿ ԿԵՐՊՈՎ ՀՇՏՎԻՆ ԴԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻ, ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ, ԱԶԳԱՅԻՆ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՍՏԵՂԾՎԻՆ ԱՅՆՊԻՍԻ ՕՐԿԱՆԿԱՆ ԱՌԱՐԱՅԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ, ՈՐՈՆՔ ԱՌԱՋԸ ԱՌՆԵՆ ԱՅՆՊԻՍԻ ՊԱՏԱՀԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒ, ՈՐՈՆՔ ՀԱՄԱՆ ԿՊԱՆՈՆԱՆ ԵՎՄԵՆ ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻ ԻՍԿԱԿԱՆ ԴԻՍԱԿԻՄԸ»:

Աճեցավ նաև, որ Հայաստանյայց եկեղեցու նոր Սահմանադրությունը նվիրագործի և ապահովի եկեղեցու նվիրապետության և հոգևոր իշխանության սուրբ հեղինակությունը և միաժամանակ լայն գործակցությունը հավատացյալ ժողովրդի, եկեղեցու կազմակերպման ու ղեկավարման նվիրական գործում, համաձայն ազգային և սահմանադրական սկզբունքների:

Բովանդակ հայությանը ստագին իղձն է Հայաստանյայց Առաքելական եկեղեցին տեսնել իր պատմական դերի և հոգևոր կոչման բարձրության վրա:

Մեր մարտիրոս և Ս. եկեղեցու վերականգնման և հոգևոր զարթոնքի աշխատանքների մեջ պատմական պատասխանատու և կարևոր դեր է վերադարձված եպիսկոպոսական ժողովին:

